ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՆԴՐԻԿՅԱՆ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳԻ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՆԻ ԹԵՄԵՐԸ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

Թ.00.05 – «կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2021

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
БОГОСЛОВСКИЙ ФАКУЛЬТЕТ

АНДРИКЯН АРМАН ГЕВОРГОВИЧ

ИРАНСКИЕ ЕПАРХИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ

(ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ)

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 09.00.05-«теория и история религии (исторические науки)»

Ереван - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Աստծաբանության ֆակուլտետում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ս. Ս. Մկրտչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Է. Գ. Մինասյան
պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Ա. Հ. Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հուլիսի 23-ին, ժամը 12^{00}-ին, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում գործող ԲՈԿ-ի 068 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ք. Երևան, 0025, Աբովյան փողոց 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենք)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2021թ. հունիսի 11-ին

Մասնագիտական խորհրդի քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Յու. Բալյան

Тема диссертации утверждена в Богословском факультете ЕГУ

Научный руководитель доктор исторических наук, профессор
С. С. Мкртчян.

Официальные оппоненты доктор исторических наук, профессор
Э. Г. Минасян
кандидат исторических наук, профессор
А. А. Арутюнян.

Ведущая организация: Институт археологии и этнографии НАН РА

Защита диссертации состоится 23-го июля 2021г в 12^{00} часов, на заседании специализированного совета 068 ВАК по -«теория и история религии (исторические науки)», при Богословском факультете ЕГУ (адрес: Ереван 0025, ул. Абовяна 52)

С диссертацией можно ознакомиться в библиотеке Богословского факультета ЕГУ.

Автореферат разослан 11 июня 2021 г.

Ученый секретарь специализированного совета:
кандидат исторических наук, доцент А. Ю. Балян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Հայ Առաքելական եկեղեցին իր գոյության ողջ ընթացքում վճռական դերակատարում է ունեցել հայության կյանքի բոլոր բնագավառներում: Ճակատագրի բերումով աշխարհասփյուռ եղած հայության հիմնած բոլոր գաղթօջախներում հայոց եկեղեցին իր վրա է վերցրել իր հոգևոր հոտի պաշտպանության, հայապահպանության, օտար պետություն-հայ համայնք հարաբերությունների կարգավորման, կրթության և լուսավորության տարածման և բազմաթիվ այլ հոգսեր, որոնց շնորհիվ դարերի ընթացքում հաջողվել է պահպանել հայ ինքնությունը: Հայկական գաղթավայրերի ուսումնասիրությունը հայաստանյան և սփյուռքի հայագետների կողմից վերջին հիսնամյակում բավական բարձր մակարդակի է հասել և հրապարակի վրա են բազմաթիվ հիմնարար աշխատություններ: Վերջին ժամանակներս ավանդական գաղթավայրերի ուսումնասիրությանը զուգընթաց մեծ թափով սկսվել է նաև հայկական Սփյուռքի գիտական ուսումնասիրության հայրենավեր և շահեկան գործը: Ի տարբերություն վերոհիշյալի, պատմական հայրենիքից դուրս ձևավորված հայոց եկեղեցու թեմերն ու վիճակները համապարփակ ուսումնասիրության կարիք ունեն: Ճիշտ է, հայոց գաղթավայրերին և հայկական Սփյուռքին նվիրված բազմաթիվ աշխատություններում ի տեղին ներկայացվում են նաև հայոց եկեղեցու թեմերը, դրանց կառույցներն ու խնդիրները, սակայն դրանք դիտարկվում են միայն հեղինակների ուսումնասիրած թեմաների համատեքստում, որպես օժանդակ նյութ, կամ էլ լրացում: Բնական է, որ հիշյալ թեմաներով զբաղվող հետազոտողները խնդիր չեն ունեցել մանրամասն և համակարգված ներկայացնել գաղթավայրերում գործող թեմական կառույցները, սակայն հանդիպում են նաև աշխատություններ, որոնք բավական ընդարձակ նյութ են պարունակում դրանց մասին:

Հայ Առաքելական եկեղեցու պատմության անքակտելի մասն են կազմում հայոց հոգևոր թեմերի պատմությունը և դրանց համակողմանի ուսումնասիրությունը: Տարբեր դարաշրջաններում տեղ գտած դեպի օտար ափեր բռնի, թե կամավոր հայոց գաղթերի արդյունքում, Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր թեմերի թիվը գաղթավայրերում գերազանցում էր բուն Հայաստանում գործողներին: Գաղթավայրերում հիմնված հոգևոր թեմերից շատերը կամ կարճ կյանք են ունեցել (մեր պարագայում օրինակ Սուլթանիե թեմը), կամ կորցրել են իրենց երբեմնի դերակատարումը՝ կապված կամ այդ օջախների

նոսրացման ու հանգման, կամ էլ Լեհահայոց թեմի պարագայում զանգվածային դավանափոխության հետևանքով ուծացման պատճառով: Այս համատեքստում չափազանց կարևոր է համակողմանիորեն ուսումնասիրել հայոց հնամենի Իրանահայ թեմերի պատմությունը, սկսած վաղնջական շրջանից մինչև մեր օրերը: Աշխատանքի նպատակից բխում է նրա արդիականությունը, քանզի մինչ այժմ թեման համապարփակ չի ուսումնասիրված և ներկայացված: Ցանկացած հայկական գաղթավայրի տարածքն ընդգրկող հոգևոր թեմի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ և քննել արդի բազմաթիվ խնդիրներ, որոնք ծագում են հայկական Սփյուռքում: Ինչպես էլ անվանենք Մայր հայրենիքից դուրս ապրող հայկական համայնքները՝ գաղթավայր, թե Սփյուռք, միևնույն է դրանց հուզող հիմնախնդիրները անցյալում, թե ներկայում հար և նման են, իսկ հայապահպանման խնդիրը եղել է ու կա այդ համայնքների գոյատևման հիմնական հարցը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Ժամանակակից Իրանի տարածքում գործող Հայ Առաքելական երեք թեմերից երկուսը՝ Ատրպատականի և Սպահանի (նախկին Նոր Ջուղայի կամ Իրանահնդկական) իրենց հիմնավոր տեղն ու դերն են ունեցել ոչ միայն իրանահայ գաղթօջախի կյանքում, այլև համահայկական նշանակության ունեցող շատ հիմնահարցերի արծարծման կիզակետում են եղել: Այն հատկապես վերաբերվում է Նոր Ջուղայի թեմին, որի հավատացյալ հոտի առաջնորդներն ու զավակները շուրջ երկու դար շարունակ հանդիսացել են հայոց հոգևոր-մշակութային առաջընթացի առաջամարտիկներ և դրան գումարած դարձել են նաև հայոց քաղաքական մտքի զարթոնքի հիմնադիրներ: Վերը բերվածները գալիս են հիմնավորելու թեմայի ընտրության նպատակը, որի գերխնդիրն է հետազոտել, ճշտել, հստակեցնել և վեր հանել Իրանահայ հոգևոր թեմերի պատմության մինչ այժմ հրապարակի վրա չեղած, ոչ պատշաճ լուսաբանված կամ թերի ուսումնասիրված հարցերը: Այս առումով կարևորում ենք սույն աշխատանքում տեղ գտած հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և Հայոց Հայրապետների դիվաններում պահվող փաստաթղերի լուսաբանումը և վերլուծությունը կապված Իրանահայ թեմերի գործունեության այս կամ այն բնագավառի հետ: Կարևոր ենք համարում նաև Իրանահայ հոգևոր թեմերի այսպես կոչված «մոռացված սրբերի» կամ սուրբ նահատակների առանձնացումն ու դրանց մասին լրացուցիչ տեղեկությունների հավաքագրումը սույն ատենախոսության մեջ:

Այսպիսով, ատենախոսության հիմնական նպատակը՝ պատմական և արդիական տեսանկյուններով Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերի

ամբողջական գործունեության ներկայացումն է: Այդ նպատակն իրականացվել է առաջադրված հետևյալ հիմնախնդիրների համատեքստում.

- Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերի ձևավորումը և զարգացումը:
- XIV-XVII դդ. Հայոց նոր վկաները «մոռացված սրբեր»:
- Նոր Ջուղայի և Ատրպատականի հոգևոր թեմերը XVIII դ.:
- Իրանահայ թեմերի փոխհարաբերությունները Սբ. Էջմիածնի հետ:
- Հայոց հայրապետների ջանքերը պարսկահայության կրոնա-իրավական դրության բարելավման գործում:
- Իրանահայ թեմերը և թեմական առաջնորդները XVII -XX դարերում:
- Ատրպատականի և Նոր Ջուղայի թեմական առաջնորդների պայքարն իրանահայերի իրավա-քաղաքական և կրոնական ազատությունների համար:
- Մեծ Եղեռնից փրկված հայ գաղթականության խնդիրները:
- Իրանահայ հոգևոր թեմերի կառավարման կանոնադրական համակարգը և փոխհարաբերությունները պետության հետ:
- Իրանահայ թեմերի հեռացումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:
- Իրանահայ թեմերի գիտա-կրթական և մշակութային գործունեությունը:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը

Հետազոտությունն իրականացվել է օգտագործելով լայն համեմատության և պատմահամեմատական մեթոդների համադրությունը: Պատմական ժամանակաշրջանը, տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, հոգևոր-կրոնական եղելությունները, իրադարձությունների վայրը, գործող պատմական դեմքերը ուսումնասիրվել են սինխրոն կտրվածքով՝ հիմնականում պահպանելով դրանց ժամանակագրական ատաղձը՝ չխախտելով պատմականության սկզբունքը: Օգտագործվել են աղբյուրագիտական հետազոտություններին բնորոշ մի շարք մեդոթաբանական դրույթներ, որոնք հնարավորություն են ընձեռել իրանահայ գաղթօջախներին առնչվող շուրջ 120 հիշատակարաններից դուրս բերել ատենախոսության թեմային առնչվողները: Այս տեսանկյունից առաջնայինն է հանդիսանում աղբյուրի հայտնաբերումը, մեր դեպքում հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և կաթողիկոսական դիվաններում պահվող փաստաթղթերում իրանահայ հոգևոր թեմերին առնչվող նյութերի դուրսբերումը, տեքստի հստակեցումը, սկզբնաղբյուրի ծագման վայրը, հեղինակը, ժամանակը, տեքստի կազմման հանգամանքները, պատվիրատուն և նպատակը: Ատենախոսության մյուս մեթոդաբանական հիմքը հանդիսացել է հերմենևտիկական (**ἑρμηνευτική**-մեկնության արվեստ) անալիզը՝ տեքստի մեկնաբանությունը, որը հնարավորություն է տալիս ճշտել սկզբնաղբյուրում կամ գիտական ուսումնասիրության մեջ հաղորդվող իրողությունների հավաստիությունը, տեքստի հեղինակի դավանաբանական պատկանելիությունը և վերաբերմունքն իր կողմից շարադրված դեպքերի

հանդեպ: Տեքստերի հերմենևտիկական անալիզը հատկապես լայնորեն տարածված է աստվածաբանական բնույթի հետազոտություններում և բնականաբար, ելնելով ներկայացվող թեմայի կրոնագիտական ուղղվածությունից, օգտագործվել է որպես ուսումնասիրության մեթոդաբանական կարևոր հիմքերից մեկը: Կիրառվել են նաև սկզբնաղբյուրների անալիզի և սինթեզի մեթոդները, երբ համեմատվել են միևնույն բնույթի և բովանդակային առումով միմյանց նման կամ լրացնող տեղեկությունները՝ աղբյուրների ժանրային տարբերություններով հանդերձ: Մեր պարագայում համեմատական նյութի սկզբնաղբյուր են հանդիսացել պատմողական բնույթի երկերը, օտարերկրացի ճանապարհորդների ուղեգրական նոթերը և հայերեն ձեռագրերի հիշատակարանների տեղեկությունները միևնույն իրադարձության, տեղի, ժամանակի և անձերի վերաբերյալ: Աղբյուրագիտական սինթեզի միջոցով ճշգրտվել են իրանահայ հոգևոր-մշակութային նշանավոր կենտրոնների գոյատևման ժամանակը, դրանց վայրերի մասին ժողովրդագրական տվյալները:

Ատենախոսության գիտական նորույթը

Սույն ատենախոսության մեջ հրապարակ են բերվել այնպիսի նյութեր, որոնք հիմնավորում են աշխատանքի գիտական նորույթը: Այս աշխատանքը առաջին փորձերից մեկն է նորահայտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ ներկայացնելու Իրանահայ հոգևոր թեմերի ամբողջական պատմությունը: Որպես իրանահայ հոգևոր թեմերի պատմության սկզբնաղբյուր, առաջին անգամ օգտագործվել են կաթողիկոսական դիվանի փաստաթղթերը և հայերն ձեռագրերի հիշատակարանները: Քննարկվել են այդ թեմերի պատմությանն առնչվող առանձին դրվագներ, որոնք մինչ այժմ չեն ենթարկվել խորքային վերլուծության. օրինակ՝ Սուլթանիեի հոգևոր թեմի, եպիսկոպոսական վիճակների և գրչության կենտրոնների հիմնումը, Իրանահայ թեմերի «մոռացված սրբերի» առանձնացումը և այլն:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ատենախոսության կիրառական կամ գործնական նշանակությունն, ըստ էության, կայանում է հետևյալում.

- Առաջին հերթին՝ այն ունի շատ կարևոր գիտաճանաչողական նշանակություն.
- Թեմերի գործունեությունը բավականին ուսանելի է արդի Սփյուռքում հայոց կրոնական և էթնիկ ինքնության պահպանման փորձի տեսանկյունից.
- Թեմերի գործունեությունը գնահատելի և ուսանելի է հայոց մշակութային արժեքների պահպանման փորձի տեսանկյունից.
- Հետազոտությունը արժևորվում է նույնիսկ մեր օրերում հայ Սփյուռք – պետություն փոխահարաբերություններում՝ իրավական կամ օրենսդրական

դաշտի կարգավորումների տեսանկյունից, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է իսլամադավան երկրին.

- Հետազոտությունը շատ է կարևորվում հայերի և իրանցիների բարեկամական և դրացիական դարավոր ավանդույթների համատեքստում, որոնք առ այսօր էլ ունեն էթնոմշակութային որոշակի ընդհանրություններ:

Ատենախոսության փորձաքննությունը

Թեման հաստատվել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ու Կրոնի պատմության և տեսության ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի վեց հոդվածներում:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն

Իրանահայ թեմերի պատմության վաղ շրջանին վերաբերվող սկզբնաբյուրները չափազանց աղքատիկ են և ավելի ուշ շրջանում դրանց թիվը ավելանում է: Աշխատանքը շարադրելիս օգտագործվել են հայ պատմիչներ Կիրակոս Գանձակեցու,[1] Թովմա Մեծոփեցու,[2] Առաքել Դավրիժեցու,[3] Խաչատուր Ջուղայեցու,[4] Ստեփաննոս Երեց Հազարջրիբեցու,[5] մատյանները, որոնցում հարուստ փաստական նյութ կա մեզ հետաքրքրող թեմայի այս կամ այն խնդրի մասին: Ատենախոսության սկզբնաղբյուրային բազայի կարևոր մասն են կազմում հայերեն ձեռագրերի հիշատակարանները,[6] Սիմեոն Ա Երևանցի

---

[1]Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Աշխատասիրությամբ Կ. Ս. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1961:

[2]Թովմա Մեծոփեցի, Պատմագրական երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մադոյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 2003:

[3]Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, հայ մատենագիրներ շարք, «Սովետական գրող» հրատ. Երևան, 1988

[4]Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն պարսից (ԺԸ դար), աշխատութեամբ Բաբգեն վարդապետի Աղաւելեանց, տպարան Մայր Աթոռոյ Էջմիածնի, Վաղարշապատ, 1905:

[5]Ստեփաննոս Երեց, Պատմագիրք (Հանգիտագիրք), Հրատարակութիւն Թեհրանի Փերիոյ Կրթասիրաց միութեան, «Ալիք» տպարան, Թեհրան, 2017:

[6] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1301-1400թթ.) կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1950; ԺԵ դարի ձեռագրերի հիշատակարաններ, մաս II, (1451-1480թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, Երևան, 1958; ԺԵ դարերի հայեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, ԳԱ հրատ., Երևան, 1967:

հայրապետի «Հիշատակարանը»[7] և «Ջամբռ»[8] աշխատությունը, ինչպես նաև Ղուկաս Ա Կարնեցի[9] կաթողիկոսի դիվանի փաստաթղթերը՝ կոնդակներ, հրովարտակներ, թղթեր, նամակներ, օրինության գրեր, մահսագրեր (հանրագրեր), փոլիցայներ (փոխանակագիր կամ փոխառության թղթեր), որոնք ճշգրիտ վավերագրեր են և անգնահատելի փաստական նյութ են իրենցում պարունակում: Աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն մեծանուն գիտնականներ Հրաչյա Աճառյանի և Հակոբ Մանանդյանի աշխատասիրությամբ հրատարակված Հայոց նոր վկաների վերաբերվող նյութերի համահավաքը:[10] Սույն աշխատանքի համար յուրօրինակ սկզբնաղբյուրի արժեք ունեն նաև Միքայել Չամչյանի,[11] Ղևոնդ Ալիշանի,[12] Հարություն Տեր-Հովհանյանի,[13] Նազարեթ Գորոյանի,[14] Հ.Առաքելյանի,[15] աշխատությունները, որոնցում տեղ գտած մի շարք փաստական տվյալներ եզակի են իրենց տեսակի մեջ և չեն հանդիպում այլ սկզբնաղբյուրներում: Հետաքրքիր նյութեր կան նաև եվրոպացի ճանապարհորդների նոթերում, որոնցից արված ծաղկաքաղը հրապարակել է Հովհաննես Հակոբյանը:[16] Հայոց եկեղեցու պատմության խնդիր-

---

[7]Դիւան հայոց պատմութեան, խմբագրութեամբ Գյուտ քին. Աղանեանցի, գիրք Գ, Թիֆլիս, 1894;

Դիւան հայոց պատմութեան, խմբագրութեամբ Գյուտ քին. Աղանեանցի, գիրք Ը, Թիֆլիս, 1908;

Դիւան հայոց պատմութեան, խմբագրութեամբ Գյուտ քին. Աղանեանցի, գիրք ԺԱ, մաս III, Թիֆլիս, 1913:

[8]Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ: Հիշատակարան Էջմիածնի Սուրբ Աթոռի և նրա հարակից վանքերի, թարգմ. Վ. Գ. Համբարձումյանի, «Մուղնի» հրատ., Երևան, 2003:

[9]Դիվան Հայոց պատմության, Նոր շարք, հ.Ա, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, ԳԱ հրատ., Երևան, 1984; Դիվան Հայոց պատմության, Նոր շարք, հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, ԳԱ հրատ., Երևան, 2003:

[10]Հայոց նոր վկաները (1155-1843), գիտական հրատարակութիւն, աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903:

[11]Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ., ԵՊՀ հրատ., Երևան, 1984:

[12]Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց և վենետաց, ի ԺԳ-ԺԴ եւ ի ԺԵ-ԺԶ դարս, Վենետիկ, Ս. Ղազար, 1896:

[13]Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, աշխատասիրեալ ի պ. Յարութիւն Տեր-Յովհանեանց, հ. առաջին, Նոր Ջուղա, 1880; հ. երկրորդ, Նոր Ջուղա, 1881:

[14]Գորոյեանց Ն. Յ., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968:

[15]Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը: Նրանց անցեալը, ներկան և ապագան, Մասն Ա, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1911:

[16]Հակոբյան Հովհ., Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. Ուղեգրություններ, հ. Ա., ԺԳ-ԺԶ դար (1253-1582թթ.), Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի,

ների արծարծումը դժվար է պատկերացնել առանց Մաղաքիա արք. Օրմանյանի հիմնարար աշխատությունների:[17] Հայոց եկեղեցական թեմերի պատմության վերաբերյալ օգտագործվել է հայտնի բանասեր Պիոն Հակոբյանի արժեքավոր մենագրությունը:[18] Հայկական գաղթավայրերի խորհրդահայ առաջին ուսումնասիրող պրոֆեսոր Աշոտ Գ. Աբրահամյանի երկհատոր մենագրությունը մինչ այսօր էլ չի կորցրել իր գիտական մեծ արժեքը:[19] Արտազի հայկական իշխանության պատմության և Ս. Թադեի վանքի XIIIդ. Առաջնորդանիստ դառնալու հարցերը քննարկվել են մեծանուն հայագետ, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի արժեքավոր լայնածավալ հոդվածում:[20] Իրանի և իրանահայ գաղթավայրի պատմության լավագույն գիտակ, նշանավոր արևելագետ-պատմաբան, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանի[21] մեծարժեք մենագրություններն ու հոդվածները մեծապես օգնել են սույն ատենախոսությունը շարադրելիս: Չափազանց կարևոր ենք համարում հմուտ իրանագետ Հմայակ

Երևան, 1932:

[17]Օրմանյան Մ. արք., Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001:

[18]Հակոբյան Պ., Հայոց եկեղեցու թեմերը, Հայագիտական ուսումնասիրություններ, ԵՊՀ հրատ., Երևան, 2003,

[19]Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ Հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Հայպետհրատ, Երևան, 1964: Հ.Բ, Երևան, 1967;

[20]Խաչիկյան Լ., Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, Բանբեր մատենադարանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973, № 11:

[21]Բայբուրդյան Վ., Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1964, № 9; Բայբուրդյան Վ., Կարմելյանների միաբանության միսիոներների գործունեությունն իրանահայության շրջանում (XVIIդ.) «Լրաբեր» հասարակական գիտությունների, № 11 (551), Երևան, 1988; Բայբուրդյան Վ., XVIIդ. Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, № 2 (124), Երևան, 1989; Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996; Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 1999: Բայբուրդյան Վ., Էջեր իրանահայության պատմությունից XIX դարում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2005; Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2005; Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, ՀՀ ԳԱԱ ՊԻ հրատ., Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 32, Երևան, 2007; Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, «Լուսակն» հրատ., Երևան, 2013; Բայբուրդյան Վ., Ստեփաննոս Երեց Տերտերյանի (Հազարջրիբեցու) «Պատմագիրքը» («Հանգիտագիրքը»)՝ որպես սկզբնաղբյուր XVII-XVIII դարերի Իրանի և իրանահայության պատմության, ԵՊՀ հրատ., Երևան, 2020:

Մարտիրոսյանի[22] աշխատությունները, որոնցում փորձ է արվել համահավաք ներկայացնել Իրանի հայ գաղութի պատմությունը և իրանահայության իրավական կարգավիճակը: 1945-1979-ականների իրանահայ համայնքի խնդիրներին է անդրադարձել Հովհաննես Փահլևանյանն[23] իր հիմնարար աշխատության մեջ: Իրանահայ համայնքի մասին վերջին շրջանի հրապարակումներից կարելի է առանձնացնել Աստղիկ Հակոբյանի[24] հոդվածները, որոնցում քննվել են 1921-1945թթ. իրանահայության իրավա-քաղաքական կարգավիճակի հարցերը: Հայոց «Մոռացված սրբերի» կամ «Նոր վկաների» վերաբերյալ հետազոտություններից կարելի է առանձնացնել Մեսրոպ արք. Աշճյանի[25] հոդվածը և հատկապես հայ սրբագրական ժառանգության լավագույն հետազոտող Քնարիկ Տեր-Դավթյանի[26] մենագրությունները: Հատկապես արժեքավոր են իրանահայ հետազոտողների աշխատությունները, նվիրված իրենց հարազատ գաղթավայրի պատմության և մշակույթի խնդիրներին: Վերջիններից կարելի է առանձնացնել Էդիկ Բաղդասարյանին,[27] ով ծավալուն և փաստական նյութերով առատ մենագրություններ է հրապարակել իրանահայ համայնքի պատմության վերաբերյալ: Հարկ է հատուկ նշել նաև իրանահայ

---

[22]Մարտիրոսյան Հ., Ժամանակակից իրանահայ գաղութի ինքնավարության մարմինները և իրավական դրություն, Պատմա-բանասիրական հանդես, ՀԽՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1969, № 1 (171); Մարտիրոսյան Հ., Իրանահայ գաղութի պատմություն, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2007:

[23]Փահլևանյան Հ., Իրանահայ համայնքը (1941-1979), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989:

[24]Հակոբյան Ա, Հայկական դպրոցներն Իրանում 1921-1945թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական ժողովածու, N 123, «Հայկարլի» ՍՊԸ տպ., Երևան, 2015; Հակոբյան Ա., Իրանահայ համայնքի ինքնավարության մարմինները և իրավական կարգավիճակը 1921-1945թթ. «Հայագիտության հարցեր» հանդես, ԵՊՀ հրատ., Երևան, 2016, թիվ 1 (7); Հակոբյան Ա., Իրանահայ համայնքը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական ժողովածու, N 126, Երևան, «Հայկարլի» ՍՊԸ տպ., 2018;

[25]Աշճեան Մեսրոպ արք., Հայոց եկեղեցու սուրբերն ու սրբոց տօները, Հայոց սրբերը և սրբավայրերը. Ակունքները, տիպերը, պաշտամունքը, «Հայաստան» հրատ., Երևան, 2001:

[26]Տեր-Դավթյան Ք., XI-XV դարերի հայ վարքագրությունը, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1980; Տեր-Դավթյան Ք., Հայկական սրբախոսություն. Վարքեր և վկայաբանություններ (V-XVIII դդ.), «Նաիրի» հրատ., Երևան, 2011; Армянские жития и мученичества V-XVII вв., Перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, изд. “Наири”, Ер., 1994.

[27]Բաղդասարյան Է., Իրանահայ համայնքների ամբողջական պատմություն, հ. I, Թեհրան-Տորոնտո-Երևան, 2012; հ.III, Գիրք Ա, Թեհրան-Տորոնտո-Երևան, 2012; հ. IV, Գիրք Բ, Թեհրան-Տորոնտո-Երևան, 2012,

վաստակաշատ հայագետ Լևոն Մինասյանի[28] արժեքավոր մենագրություն-ները, որոնք աչքի են ընկնում իրենց թեմատիկ բազմազանությամբ և ընգրկում են ժամանակագրական լայն սահմաններ: Ատրպատականի հայոց թեմի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հրապարակել իրանահայ բանասեր Նորայր Մամյանը «Ռաֆֆի» տարեգրքում[29] Իրանահայության մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Բաբգեն և Սեդա Բալյան-Տեր-Հակոբյանների[30] մենագրությունը: Օտարագիր հայ հետազոտողներից հարկ է հիշատակել Վազգեն Ղուկասյանի[31] ծավալուն մենագրությունը նվիրված Նոր Ջուղային:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է՝ ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածությունում տրվել է ատենախոսական թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, ուսումնասիրության փորձաքննությունը, սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Գլուխ 1

Հայ Առաքելական եկեղեցու իրանահայ թեմերը միջնադարում և նոր ժամանակներում (պատմական ակնարկ)

Ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից: Առաջին ենթագլուխը վերնագրված է «**Հայկական գաղթօջախների ձևավորումն Իրանի տարածքում» (V-XVIII դդ.):** Իրանահայ գաղթօջախների սկզբնավորման հարցում հայագիտության մեջ միասնական կարծիք չկա, ուստի և չխորանալով հրապարակում եղած կարծիքների ներկայացման

---

[28]Մինասեան Լ., Պատմութիւն Փերիայի հայերի (1606-1956),Անթիլիաս, 1971; Մինասեան Լ., Իրանի հայկական եկեղեցիները (ընդհանուր ակնարկ), Նոր Ջուղա, 1983; Մինասեան Լ., Գրչության արուեստը Նոր Ջուղայում, տպարան Ս. Ամենափրկիչ վանքի, Նոր Ջուղա, 1991; Մինասեան Լ., Իրանի հայկական վանքերը, Բ. տպագրութիւն, «Արմենիա» տպ., Նոր Ջուղա, 2003; Մինասեան Լ., Իրանահայ պարբերական մամուլը (1894-1994), տպարան Ս. Ամենափրկիչ վանքի,Նոր Ջուղա, 1994; Մինասեան Լ., Սպահանի հայոց թեմի առաջնորդները, Ս. Ամենափրկիչ վանքի տպարան, Նոր Ջուղա, 1996; Մինասյան Լ., Ազգային և մշակութային գործիչներ, Նոր Ջուղա, 2004:

[29] Մամեան Ն., Ատրպատականի հայոց թեմը, «Ռաֆֆի» տարեգիրք, Ա տարի, 1969, տպ. «Մոդերն», Թեհրան, 1968:

[30]Բալեան-Տէր-Յակոբեան Բ., Բալեան-Տէր-Յակոբեան Ս., Պատմութիւն իրանահայերի, ԱԼՔՕ հրատ., Գլէնդէլ, 1985:

[31]Ghougassian V. The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the seventeenth century, Scholars Press, Atlanta, Georgia, 1998.

թնջուկի մեջ, փորձ է արվել համառոտ պատմական ակնարկի ձևաչափով ներկայացնել դրանց պատմությունը զուգակցված Հայոց եկեղեցու իրանահայ թեմերի պատմության հետ: Այստեղ ներկայացվել են պատմական հետևյալ իրադարձությունները. ա/ Սասանյան Արտաշիր և Շապուհ Բ Երկարակյաց թագավորների կողմից 228 և 369թթ. Հայաստանից տասնյակ հազարավոր հայ գերիների հոգևորականներով հանդերձ բռնագաղթեցումն Իրան, բ/ 387թ. Հայաստանի առաջին բաժանումից հետո երկրի արևելյան նահանգների անցումը Սասանյաններին և Նոր Շիրականը պատմական Ատրպատականին միացման արդյունքում Պարսկահայք նահանգի կազմավորումը, գ/ Վդ. հայկական բնակավայրերի ձևավորումը Պարսկահայքում, Մարանդում և Արտազում դ/ 1048 և 1065թթ. Սելջուկ խաշնարած ցեղերի արշավանքները Հայաստան, որոնց արդյունքում երկրի 24 գավառներից և Անի մայրաքաղաքից Իրան տարվեցին հազարավոր գերիներ, որոնք կարողացան համախմբվել իրենց հոգևոր առաջնորդների կողքին և հիմք դնել Իրանի տարածքում առաջին գաղթօջախներին, ե/ Իրանի հայկական գաղթօջախների ստվարացումն ու աշխարհագրության ընդլայնումը մոնղոլական տիրապետության շրջանում (Սուլթանիե, Սալմաստ, Ռեյ), զ/ հայ և մոնղոլական դաշնագրի կնքման արդյունքում Ս. Թադեի վանքի առաջնորդությունը ժառանգած հոգևոր և աշխարհիկ գործիչների կողմից Արտազի գավառում հայկական իշխանության հիմնումը (գոյատևել է մինչև 1426թ.), է/ XIVդ. վերջերից Լենկ Թեմուրի և նրան հաջորդած խաշնարած վաչկատուն ցեղերի կողմից իրանահայ գաղթավայրերի ասպատակումն ու ավերումը, ը/ XVI-XVII դդ. իրանահայ գաղթավայրերից շատերը հայտնվելը թուրք-իրանական ավերիչ պատերազմների թատերաբեմում, թ/Շահ Աբբաս Ա-ը, 1604թ. ձեռնարկած և իրականացրած հայոց մեծ բռնագաղթը («Մեծ սուրգուն»), որի արդյունքում Հայաստանից տեղահանվեց շուրջ 500 հզ. մարդ, ժ/ Նոր Ջուղա քաղաքի հիմնումը և ծաղկման շրջանը XVIIդ., ի/Իրանում գահակալական կռիվների արդյունքում հայկական գաղթավայրերի բնակչության դրության վատթարացումը և իրանահայերի արտագաղթը Հնդկաստան, Հնդկաչինի և Ծայրագույն Արևելքի երկրներ:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «**Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերի ձևավորումը և զարգացումը»:** Այստեղ քննարկվել են հետևյալ երևույթները. ա/ Ս. Թադեի վանական թեմը որպես Հայ Առաքելական եկեղեցու հնագույն և կարևոր կենտրոն, որի առաջնորդները վճռական խոսքի իրավունք ունեին հայոց եկեղեցու համար կարևոր որոշումների ընդունման գործում, բ/ Xդ. վերջին և XIդ. սկզբին Սալմաստի, Հերի ու Զարևանդի, ինչպես նաև Առնայի եպիսկոպոսությունների գոյության փաստը, գ/ 1179թ. Հեր և Զարևանդ գավառի Ղազար եպիսկոպոսի և Սալմաստից Ստեփաննոս

եպիսկոպոսի Հռոմկլայի եկեղեցական ժողովին մասնակցելու իրողությունը, դ/ Կոնստանդին Ա Բարձրբերդցու 1247թ. կոնդակով Ս. Թադեի վանքի հաստատումը որպես Ատրպատականի թեմական կենտրոն, ե/XIII-XIVդդ. Սուլթանիեում եկեղեցական նոր թեմի հիմնումը, զ/ Նոր Ջուղայի թեմի հիմնումը XVIIդ. սկզբին, որի հոգևոր իշխանությունը տարածվում էր Թեհրանի, Նոր Շիրազի, Համադանի, Ռաշտի, Անզալիի, Քաշանի, Ղազվինի, Բաղդադի հայ համայնքների վրա (շուրջ 74 բնակավայր):

Երրորդ ենթագլուխը վերնագրված է «**XIV-XVII դդ. Հայոց նոր վկաները կամ Իրանահայ հոգևոր թեմերի «մոռացված սրբերը» (Ավագ Սալմաստեցի. Իսահակ Թավրիզեցի. Միրաք Թավրիզեցի. Գրգոր Արփայեցի)**»: Այստեղ ներկայացվել է հայոց նոր վկաների վարքերի քննությունը հիմնվելով սրբախոսական գրականության («Հայսմավուրք» մատյաններ), ժամանակի պատմիչների (Թովմա Մեծոփեցի, Առաքել Դավրիժեցի) և հայերեն ձեռագրերի հիշատակարանների հաղորդած տեղեկությունների վրա: Արձանագրվել է, որ XIV-XVդդ. հայկական մարտիրոսագրության մեջ իշխանների, զորականների, ազնվական կանանց և այլոց փոխարեն հանդես են գալիս ժողովրդական լայն զանգվածների ներկայացուցիչներ՝ հասարակ ռամիկներ, արհեստավորներ և առևտրականներ:

Չորրորդ ենթագլուխը վերնագրված է **Նոր Ջուղայի և Ատրպատականի հոգևոր թեմերը XVIII դ. Փոխհարաբերությունները Սբ. Էջմիածնի հետ. Հայոց հայրապետների ջանքերը պարսկահայության կրոնա-իրավական դրության բարելավման գործում (Սիմեոն Երևանցի, Ղուկաս Կարնեցի կաթողիկոսներ):** Այստեղ անդրադարձ է կատարվել Սեֆյան հարստության անկումից հետո Իրանում ստեղծված խառնակ իրավիճակին և գահակալական կռիվներին, որոնցից հատկապես տուժեցին երբեմնի ծաղկուն հայկական գաղթավայրերը: Իրանահայության շահերի պաշտպանության բեռն իրենց վրա էին վերցրել Ատրպատականի և Նոր Ջուղայի թեմակալ առաջնորդներն ու Ամենայն Հայոց կաթողիկոսները, որոնց շարքում առանձնացվել են Սիմեոն Ա Երևանցի և Ղուկաս Ա Կարնեցի հայրապետները: Կաթողիկոսական դիվանի փաստաթղթերի քննությունը ցույց է տալիս, որ Հայոց Հայրապետներն իրանահայ թեմերի առաջնորդների, Թավրիզի, Խոյի, Սալմաստի հայ համայնքների աշխարհական ավագների, Նոր Ջուղայի քալանթարների և կաթողիկոսական նվիրակների միջոցով կապ էին հաստատել Իրանի իշխանությունների հետ և հնարավոր բոլոր միջոցներով փորձել են ձեռք բերել դրանց բարյացկամությունը հանդեպ իրենց հոգևոր հոտը: Իրանում բացարձակ անիշխանության տարիներին իրանահայության համար չարիք էր դարձել «Կըզեազդի» (քրիստոնյա ընտանիքներից հարեմի համար աղջիկներ տանելը) կոչվող տուրքը: Սիմեոն կաթողիկոսը տեսնելով, որ իր հորդորները

առ տեղական մահմեդական կառավարիչներ ապարդյուն են անցնում, իր նվիրակների միջոցով հրահանգ է իջեցնում տեղի հայության հոգևոր և աշխարհիկ պետերին ձեռնարկել շուտափույթ միջոցներ արբունքի տարիքին հասած աղջիկներին ամուսնացնելու գործում: Միևնույն ժամանակ Սիմեոն Հայրապետը միասնական օրհնագիր է ուղարկում՝ սրբագործելու համար այդ ամուսնությունները:

Հինգերորդ ենթագլուխը վերնագրված է «**Իրանահայ թեմերի առաջնորդները XVII-XVIIIդդ. (համառոտ բնութագիր)**»: Ժամանակագրական հերթականությամբ ներկայացվել են թեմական առաջնորդները և նրանցից առավել մեծ վաստակ ունեցողների գործունեությունը (Խաչատուր Կեսարացի, Ստեփանոս Ջուղայեցի, Ալեքսանդր Ջուղայեցի):

Գլուխ 2

Իրանահայ Հոգևոր թեմերը XIX-XX դարերում

Ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է յոթ ենթագլխից:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «**Իրանահայ հոգևոր թեմերը XIXդ. Պարսկահայության վիճակի բարելավումը Նասրեդդին և Մոզաֆֆարեդդին շահերի օրոք**»: Ֆաթհ Ալի շահի կողմից իրանահայության տրվեցին որոշակի արտոնությունները, հատկապես Թուրքմենչայի պայմանագրի կնքման արդյունքում պարսկահայերի Արևելյան Հայաստան ներգաղթից հետո: XIXդ. Հայ Առաքելական եկեղեցու իրանահայ թեմերն իրենց ինքնավարության շնորհիվ հանդիսանում էին պարսկահայ գաղթօջախների բնակչության իրավական դրության երաշխավորները և պարսկական պետությունհայ համայնք իրավա-քաղաքական հարաբերությունները կարգավորող միակ լիազոր մարմինները: Այս գործընթացում կարևոր դեր էր հատկացված թեմական առաջնորդներին, որոնք հոգևոր պետեր լինելուց բացի, պարսկական իշխանությունների կողմից ճանաչվում էին որպես հայ համայնքների կառավարիչներ: Իրանահայության տնտեսական, սոցիալական, իրավական և կրոնական վիճակը բարելավվեց ղաջարական Նասրեդդին և Մոզաֆֆարեդդին շահերի օրոք:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «**Ատրպատականի թեմական առաջնորդների պայքարը իրենց հոգևոր իշխանության տակ գտնվող հայության իրավա-քաղաքական և կրոնական ազատությունների համար (Գեորգ եպիսկոպոս Վեհապետյան և այլք)**»: Օգտվելով բարենպաստ պայմաններից Ատրպատականի և Նոր Ջուղայի թեմական առաջնորդները կարողացան կենտրոնական իշխանություններին համոզել գնալու որոշ արմատական զիջումների: Ատրպատականի թեմի առաջնորդ Գեորգ եպս. Վեհապետյանը 14 կետից բաղկացած բողոքագիր ներկայացրեց Նասրեդդին շահին և վերջինս հրապարակվեց շահական ֆերման (հրովարտակ), որը Իրանում

բարձրագույն իրավական ակտի ուժ ուներ և որում ամրագրված էին Ատրպատականի հոգևոր թեմի հովանու տակ գտնվող հայերի իրավունքները: Գեորգ սրբազանի և նրա հաջորդների պայքարի արդյունքն էր արդեն հաջորդ դարի սկզբին իշխանությունների կողմից վավերացված «Ատրպատականի թեմական առաջնորդի ընտրության համար կայանալիք ընտրողական ընդհանուր ժողովի ներքին կանոնադրությունը» փաստաթուղթը:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է «**Նոր Ջուղայի թեմական առաջնորդների պայքարը իրենց հոգևոր իշխանության տակ գտնվող հայության իրավա-քաղաքական և կրոնական ազատությունների համար (Թադեոս եպիսկոպոս Բեկնազարյան և այլք)**»: Նոր Ջուղայի կամ Իրանահնդկական թեմի առաջնորդ Թադեոս եպս. Բեկնազարյանն իր առաջնորդության 12 տարիների (1851-1863թթ.) ընթացքում ազգանվեր և եկեղեցանվեր գործունեություն ծավալեց և ներդնելով մեծ եռանդ ու դիվանագիտական ակնառու հմտություններ, կարողացավ շահել Նասրեդդին շահի և արքունիքի բարյացկամությունը և ստանալ շահից մի քանի հայանպաստ ֆերման ու արտոնագիր ի նպաստ Նոր Ջուղայի և շրջակա հայաշատ գավառների հայ բնակչության, օրենսդրական կարգով պարսկահայերը վերցվեցին պետության հովանավորության տակ՝ ձեռք բերելով «հավատարիմ ժողովրդի» կարգավիճակը, ինչը մինչ այդ անիրագործելի երևույթ էր համարվում: Թադեոս սրբազանի ջանքերը Նոր Ջուղայի և Փերիայի հայ բնակչության անձի ապահովության, հարկերի և տուրքերի թեթևացման, հայ երիտասարդներին զինվորագրությունից ազատելու ուղղությամբ իրավամբ անգնահատելի էին: Նոր Ջուղայի թեմական հաջորդ առաջնորդների և աշխարհական համայնքի ջանքերի շնորհիվ, արդեն հաջորդ դարում՝ 1909թ., հաջողվեց կենտրոնական իշխանությունների կողմից վավերացնել տալ «Կանոնադրություն Պարսկա-Հնդկաստանի թեմի հայոց ազգային սահմանադրության» փաստաթուղթը:

Չորրորդ ենթագլուխը վերնագրված է «**Մեծ եղեռնից փրկված հայ գաղթականության խնդիրները և Ատրպատականի թեմական առաջնորդ Ներսես արք. Մելիք Թանգյանի հայրենանվեր գործունեությունը**»: Ներսես արք. Մելիք-Թանգյանը Հայոց եկեղեցու պատմության մեջ են այն եզակի թեմական առաջնորդներից էր, ով շուրջ չորս տասնամյակ հոգևոր, հասարակական և կրթամշակութային բեղուն գործունեություն ծավալեց միևնույն թեմում՝ արժանանալով հոգևոր հոտի անվերապահ վստահությանն ու հարգանքին: Ներսես սրբազանի ջանքերով հայության համար ամենադժնդակ տարիներին Ատրպատականի կամ Թավրիզի թեմը դարձավ ապաստան եղեռնապուրծ գաղթականության ու խորհրդային իշխանություններից հալածյալների համար, ինչպես նաև կրթամշակութային երևելի կենտրոն վերածվեց իրանահայ գաղթօջախում: Առաջին աշխարհամարտի մղձավանջային տարիներին

Ներսես սրբազանը հավատարիմ իր ուխտին և կոչումին նեցուկ կանգնեց իր ժողովրդին՝ փրկելով հազարավոր հայերի կյանքը թուրքական յաթաղանից: 1915թ. Վան-Վասպուրականի բնակչության գաղթի մի ալիքը ուղղվեց դեպի Իրան: Ներսես Մելիք-Թանգյանի և Գաղթականության կոմիտեի անդամների եռանդուն և գործունյա ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ կանխել մարդկային մեծաթիվ կորուստները և ապահովել Վանից, Շատախից և Մոկսից գաղթված հայության կյանքը:

Հինգերորդ ենթագլուխը վերնագրված է «**Իրանահայ թեմերի առաջնորդները XIX-XXդդ. (համառոտ բնութագիր)**»: Ժամանակագրական հերթականությամբ ներկայացվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր իշխանության ժամանակ Ատրպատականի և Նոր Ջուղայի թեմակալ առաջնորդները, ինպես նաև լուսաբանվել է նրանցից առավել մեծ վաստակ ունեցողների գործունեությունը: XIX-XX դարերում իրանահայ հոգևոր թեմերի առաջնորդները չնայած երկրին և իրանահայությանը բաժին ընկած փորձություններին և պատմական շրջադարձային իրադարձություններին (Իրանահայության 1828-1829թթ. և 1946-1948թթ. ներգաղթերը Հայաստան, Իրանի սահմանադրական հեղափոխությունը, Հայոց Մեծ Եղեռնը, Առաջին և երկրորդ աշխարհամարտերը, Իրանի իսլամական հեղափոխությունը և այլն) հավատարիմ մնալով իրենց ուխտին և առաքելությանը, շարունակեցին իրենց ազգանպաստ և եկեղեցանվեր գործունեությունը:

Վեցերորդ ենթագլուխը վերնագրված է «**Իրանահայ հոգևոր թեմերի կառավարման կանոնադրական համակարգը և փոխհարաբերությունները պետության հետ XX դ.**»: Ատրպատականի և Նոր Ջուղայի թեմական կանոնադրությունների ընդունումից հետո, առաջնորդարաններին և թեմական խորհուրդներին հետագա տարիներին հաջողվեց հասնել նրան, որ դրանք 1960-ականների վերջին իրանական իշխանությունների կողմից ճանաչվեցին որպես կրոնա-մշակութային և բարեգործական ընկերակցություններ: Շնորհիվ «Շորա» փաստաթղթի՝ առաջնորդարանների և թեմական խորհուրդների իրավական դրության հստակեցման արդյունքում, Իրանահայ թեմերը ստացան պետական գրանցում ունեցող իրավաբանական անձի կարգավիճակ:

1979թ. Իրանում իսլամական հեղափոխությունից հետո իրանահայ բոլոր երեք թեմերի՝ Ատրպատականի, Սպահանի և Թեհրանի թեմական խորհուրդները հավասարվեցին միություններին, որն անընդունելի ու վիրավորական էր հայ համայնքի համար և դա էր պատճառը, որ երկար ժամանակ չէին հրավիրվում թեմական պատգամավորական ժողովներ: Ավելի ուշ Իրանի իսլամական հանրապետության իշխանությունները փոխեցին իրենց դիրքորո-

շումը և թեմերը ճանաչեցին որպես իրանահայության ներկայացնող մարմիններ: Թեհրանի թեմի առաջին կանոնադրությունը մշակվել էր դեռևս 1944թ., որը համարվել էր ժամանակավոր: Թեհրանի թեմը Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ անցնելուց հետո, նրա երկարամյա առաջնորդ Արտակ արք. Մանուկյանը (1960-1999) մշակեց թեմի կանոնագիր ծրագիրը, որը աննշան փոփոխություններով գործում է մինչ այսօր:

Յոթերորդ ենթագլուխը վերնագրված է «**Իրանահայ թեմերի հեռացումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից**»: Իրանահայ հոգևոր թեմերի պատմության ամենախճճված և քաղաքականացված իրադարձություն կարելի է համարել իրենց կազմավորումից սկսած Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա Իրանահայ թեմերի ապօրինի օտարումը և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությանն անցնելը: 1950-ական թթ. վերջերից հայկական Սփյուռքի տարբեր վայրերում սկսված տխրահռչակ այսպես կոչված հակաէջմիածնական շարժումը, որը զուտ քաղաքական ենթատեքստ ուներ վարակեց նաև իրանահայ թեմերի կառավարչությունը ստանձնած քաղաքական ուժերին: Վերջիններս ակնհայտ խրախուսվում էին ժամանակի իրանական կառավարության կողմից: Հայտնի փաստ է, որ մինչև 1956թ. Ս. Էջմիածնի և Կիլիկիո կաթողիկոսության միջև հարաբերությունները եղբայրական էին, սակայն երբ որոշ ուժեր, որոնք ձգտում էին իրենց քաղաքական շահերին ենթարկել Հայոց եկեղեցական կառույցները և պառակտել ոչ միայն նվիրապետական աթոռները, այլև թեմերն ու հավատացյալ ժողովրդին, կարողացան իրենց նկրտումների գործիքի վերածել անթիլիասական որոշ բարձրաստիճան միաբանների, որոնց մեջ իր հակաէջմիածնական վարքով և հոետորաբանությամբ հատկապես աչքի էր ընկնում Խորեն եպս. Բարոյանը: 1958թ. փետրվարի 26-ին Թեհրանի թեմի պատգամավորների ժողովը որոշեց դադարեցնել իր անվանական ձևական կապը Մայր Աթոռի հետ և խնդրամատույց լինել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռին իր հովանու տակ առնելու Թեհրանի թեմը: Այս որոշմանը որպես հիմնավորում թվարկված էին բացահայտ կեղծ ու շինծու հիմնավորումներ, որոնք բացահայտ քաղաքական ենթատեքստ ունեին: Նույնաբովանդակ և նույն կաղապարով դիմում են ներկայացնում սկզբում Ատրպատականի, այնուհետև նաև Նոր Ջուղայի թեմական ժողովները: Առհամարելով Ամենայ Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ողջախոհության կոչերը, հապճեպ Թեհրանի, Սպահանի և Ատրպատականի թեմակալ առաջնորդներ են ընտրվում համապատասխանաբար՝ Արտակ եպս. Մանուկյանը, Ներսես վրդ. Բախտիկյանը և Արսեն վրդ. Ավետիքյանը: Անթիլիասի կողմից էջմիածնական թեմերի զավթումը ապօրինի էր և որևէ աղերս չուներ իրանահայության հոգևոր պահանջմունքների հետ: Հայ Առաքելական եկեղեցու միասնականության խախտման հիշյալ քայլերն ու քաղաքական դրդապատճառներով

իրականացված բացահայտ «թեմագողությունը» պառակտեցին իրանահայ համայնքները:

Գլուխ 3
Իրանահայ հոգևոր թեմերի գիտա-կրթական և մշակութային գործունեությունը

Ատենխոսության այս գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «**Իրանահայ հոգևոր թեմերի գրչության կենտրոնները (Սբ. Թադեոսի վանք, Խոյ, Մակու, Թավրիզ, Սուլթանիե, Նոր Ջուղա և այլք**»: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ականատես հեղինակների արժանահավատ տեղեկություններ են պահպանված Իրանահայ թեմերը կամ եպիսկոպոսական վիճակներն ընդգրկող նահանգների, գավառների, հայաշատ քաղաքների, վանքերի, եկեղեցիներ և գրչության կենտրոնների մասին: Դրանցում հիշատակվում են նաև նշված թեմերի բազմաթիվ առաջնորդներ, հոգևոր տարբեր աստիճան ունեցող գործիչներ, գրիչներ, ծաղկողներ: իրանահայ գաղթավայրերում գործած գրչության կենտրոններում ընդօրինակած կամ հեղինակած մատյանների թեբավականին լայն է՝ Աստվածաշունչ, Ավետարան, Առաքյալների թղթեր, Ճառընտիր, Մեկնություններ, Դավանաբանական թղթեր, Ժողովածուներ, Տոնապատճառ, Յասմաւուրք, Սուրբ Գրոց Լուծումք, գրական ստեղծագործություններ՝ օրինակ Գրիգոր Նարեկացու Մատյան ողբերգությանը և այլն:Ս.Թադեի վանքը պահպանել էր նշանավոր գրչության կենտրոնի իր կարգավիճակը: XIVդ. սկզբներին Սբ.Թադեոսի վանքի առաջնորդ Տեր Զաքարիայի ջանքերի շնորհիվ ինչ որ չափով աշխուժացավ Արտազի հոգևոր-մշակությաին կյանքը, որի մասին են խոսում վանքում ընդօրինակված մի շարք արժեքավոր մատյանները: Ռըստակես գրիչը, ով ամենայն բարեխճությամբ և երախտագիտությամբ մեկ առ մեկ հիշատակում է սբ. Թադեոսի վանքի ռաբունապետերին, միաբաններին, սպասավորներին: 1330թ. թվագրվող նույն Ռըստակեսի կողմից ընդօրնակած Ավետարանից հետո, հաջորդ դարից պահպանվել է միայն երկու մատյան, որտեղ հիշատակվում է Սբ. Թադեոսի վանքը որպես գրչության վայր կամ պատվիրատու: Ի տարբերություն Սբ. Թադեոսի գրչության կենտրոնի, Ատրպատականի մեկ այլ հայաշատ կենտրոնում՝ Թավրիզում, հոգևոր-մշակությաին կյանքն առավել աշխույժ էր, ինչին առաջին հերթին նպաստում էին քաղաքի տնտեսական ներուժը և ժամանակի ընթացքում քաղաքական կենտրոն դառնալու հանգամանքը: Թավրիզում գործող երկու հոչակավոր՝ Սբ. Աստվածածին և Սբ. Սարգիս վանքերը, եղել են գրչության նշանավոր կենտրոններ, որոնց պահելու ծախսերը մեծամասամբ հոգացել են տեղի հայ վաճառականները և նրանց դուստրերն ու կանայք: Թավրիզի

գրչության կենտրոնում ընդօրինակված մատյանների թիվը բավական մեծ է և բազմաժանր է նաև դրանց բովանդակությունը: Թավրիզի գրիչներն ու կազմողները նաև նորոգում էին հին ու մաշված մատյանները: Հիշատակարանների շնորհիվ կարող ենք բերել Թավրիզի գրչության կենտրոններում գործած մի շարք գրիչների և ծաղկողների անուններ՝ Հովհաննես, Թումա, Սարգիս, Ներսես երեց, Աբրահամ եպիսկոպոս Մըսրի, Ստեփաննոս եպիսկոպոս Առնջեցի, Տիրավագ և այլք: XIVդ. Իրանի տարածքում հիմնված Սուլթանիե վաճառաշահ քաղաքում ստեղծվեց հայաշատ գաղթավայր և հոգևոր թեմի, որում հիմնված վանքերում հաստատվեցին գրչության կենտրոններ: XVդ. Սուլթանիեի գրչության կենտրոնը դադարեց գոյություն ունենալուց, ինչպես և երբեմնի հարուստ ու մարդաշատ հայկական գաղթօջախը: Սուլթանիեի գրչության կենտրոնում գործած գրիչներից ու ծաղկողներից պահպանվել են լոկ մի քանիսի անունները՝ Գրիգոր, Բարսեղ երեց, Ավագ, Մխիթար Անեցի, Կարապետ: XVIIդ. ձևավորվում է իրանահայ գեղարվեստի և գրչության Նոր Ջուղայի կենտրոնը, որը անջնջելի հետք թողեց ոչ միայն գաղթօջախի այլև ողջ հայկական մշակույթում: Առաջին ձեռագիր մատյանը, որի գրությունը ավարտվել է Նոր Ջուղայում 1607թ., Հակոբ երեց Ջուղայեցու նկարազարդած Ավետարանն է, որը պահպանվում է Սբ. Ամենափրկչյան մատենադարանում: Նոր Ջուղայում ստեղծված և մինչ այսօր պահպանված գրչագիր մատյանների թիվը 672-ն է, որոնք պահվում են Նոր Ջուղայում, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Երուսաեմի Սրբոց Հակոբյանց վանքում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններում, Բրիտանական թանգարանում, ամերիկյան մի շարք թանգարաններում և համալսարանների գրադարաններում: Նոր Ջուղայում ընդօրինակված կամ ինքնուրոյն հեղինակած հայերեն ձեռագրերի հիշատակարաններում պահպանվել է 40-ից ավելի գրիչների անուններ՝ Ազարիա դպիր, Ազարիա քարտուղար, Աստվածատուր դպիր, Աստվածատուր քահանա, Արիստակես երեց, Ավետիք սարկավագ, Բարաղամ տիրացու, Բարսեղ երեց, Բարսեղ կրոնավոր, Գասպար երեց, Գրիգոր, Զաքարիա երեց Վանեցի, Խաչատուր երեց, Խոջասար Նաղաշ, Կիրակոս երեց, Հայրապետ երեց, մարգար դպիր, Հակոբ երեց, Հարություն դպիր, Հովհաննես աբեղա, Հովհաննես վարդապետ Մ. Սպահանցի, Մարկոս երեց, Մեսրոպ Խիզանցի, Մկրտիչ երեց, Պետրոս քահանա, Սիմոն քահանա և այլք: Հիշյալ հոգևոր կոչում ունեցող մարդկան կողքին կան նաև աշխարհական գրիչներ, ինչպես օրինակ Հովհաննես նոտարը կամ Պետրոս վաճառականը: Հատկանշական է, որ Նոր Ջուղայի կուսանաց մենաստանում ևս միանձնուհիները զբաղվել են գրչության արվեստով: Կին գրիչներից պահպանվել են կույս Սառա Դաշտեցու, կույս Իշխանի, կույս Վարդխաթունի անունները, որոնք արտագրել են Ավետարան, Ճառընտիր և

Քարոզգիրք մատյանները: Նոր Ջուղայի գրչագիր մատյանները նկարազարդողներից մեզ են հասել մի քանիսի անունը՝ Մեսրոպ Խիզանեցի, Հակոբ Ջուղայեցի, Ստեփանոս քահանա, Ստեփանոս երեց Նաղաշ, Խոջասար նաղաշ, Մկրտիչ Նաղաշ, Հայրապետ վարպետաց-վարպետ:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «**Իրանահայ հոգևոր թեմերին պատկանող նշանավոր վանքեր, վանական համալիրներ, եկեղեցիներ, առաջնորդանիստ կառույցներ և այլք, համառոտ ակնարկ հնագույն ժամանակներից մինչև XXդ. վերջ**»: Հայ Առաքելական եկեղեցու թեմերի հոգևոր իշխանության սահմաններում գործել են վեց նշանավոր վանքեր և վանական համալիրներ. Ատրպատականի նահանգում՝ Դերիկի Ս. Աստվածածին վանքը, Ս. Ստեփաննոս Նախավկայի և Ս. Թադեոսի վանքերը, Նոր Ջուղայում՝ Ս. Ամենափրկիչ և Ս. Կատարինյան, Փերիայի գավառում Հազարջրիբ գյուղում Ս. Աստվածածին վանքերը: Իրանահայ հոգևոր երեք թեմերը միասին ունեցել են 497 հայաբնակ գյուղ և քաղաք, որոնցից 178-ի եկեղեցի ունենալ-չունենալը անորոշ է, իսկ մնացյալ 312 գյուղ ու քաղաքն ունեցել են 385 եկեղեցի: Ներկա դրությամբ կանգուն են շուրջ 80 եկեղեցի ու վանք, որոնցից 40-ը՝ Ատրպատականի, 20-ը՝ Թեհրանի և 30-ը՝ Սպահանի թեմերի հոգևոր-վարչական տարածքներում:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է «**Իրանահայ հոգևոր և մշակութային ականավոր գործիչները**»: Իրանահայ գաղթօջախները հսկայական դեր են խաղացել հայոց հոգևոր և մշակութային կյանքում: XVII-XVIII դդ. Նոր Ջուղան դարձել էր հայոց հոգևոր-մշակութային յուրատեսակ մի մայրաքաղաք, որտեղ կենտրոնացել էին հիմնականում հոգևոր դասը ներկայացնող լուսավորյալ հայ մտավորականության հիմնական ուժերը: Այստեղ ներկայացվել են հայտնի և քիչ հայտնի գործիչներից մի քանիսի համառոտ բնութագիրը՝ հաշվի առնելով առաջին հերթին նրանց հոգևորական լինելու և կոնկրետ իրանահայ թեմերում գործելու պարագան: Խաչատուր Կեսարացին (1509-1646) հայոց հոգևոր-մշակութային երևելի գործիչներից է, ով Նոր Ջուղայում իր հովվական գործունեության ընթացքում կարողացավ գլուխ բերել երկու խոշոր մշակութային-լուսավորական ձեռնարկ: Առաջինը՝ Իրանում և ընդհանրապես Միջին Արևելքում 1636թ. հիմնված տպարանն էր և երկրորդը՝ Նոր Ջուղայի հռչակավոր դպրոցը, որը նույնիսկ «համալսարան» էին կոչում ժամանակակիցները: Կեսարացու հիմնած դպրոցի նշանավոր սաներից էին՝ Ոսկան Երևանցին, Հովհաննես վարդապետ Մրքուզ Ջուղայեցին, Դավիթ եպիսկոպոսը և այլք: Խաչատուր Կեսարացին նաև հմուտ մանրանկարիչ էր: Նրա նկարազարդած և ծաղկած գրչագրերից մեզ են հասել երեքը: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի միաբան, «Տիեզերալույս փիլիսոփա» **Հովհաննես վարդապետ Մրքուզ Ջուղայեցին** (1643-1715) Հայ Առաքելական եկեղեցու

անկախությունն ու ինքնուրույն գոյության իրավունքը պաշտպանող ականավոր և մեծահռչակ գործիչներից էր: Հովհաննես Մրքուզը ականավոր աստվածաբան, փիլիսոփա, տրամաբան, քերական և գեղանկարիչ էր, ով թողել է հարուստ գիտական ժառանգություն: Մրքուզ Ջուղայեցին այն եզակի հայ մատենագիրներից է, ում աշխատությունները տպագրվել են իր կենդանության օրոք: Նրա ձեռագիր և տպագիր աշխատություններից շատերը պահվել են հավատացյալ հայորդիների տանը որպես սրբազան գիրք: Հովհաննես վարդապետի աշխատություններից հիշատակության են արժանի «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց», «Քերականութիւն», «Գիրք որ կոչի Սրբազնագործութիւն», «Ասուածաբանութիւն», «Դաւանութիւն հաւատոյ», «Կրթութիւն հաւատոյ», «Մեկնութիւն Սաղմոսի», «Մեկնութիւն Երգոյ երգոյն», «Տրամկցութիւն ճշմարտութեան», «Գիրք համառօտ վասն իսկապէս ճշմարիտ հաւատոյ», «Գիրք պատմութեան», «Ընձալի Քրիստոսի օրենքը» և այլն: Հովհաննես Մրքուզը փայլուն տիրապետում էր պարսկերենին և արաբերենին և իր մի քանի աշխատություններ գրված են եղել հայ և պարսիկ լեզուներով դեմ առ դեմ: Պարսից Սուլեյման շահը և նրա հաջորդ շահ Սուլթան Հուսեյնը ցանկանալով դավանափոխ անել իրանահայությանը իրենց հետ վերցնելով բանիմաց շիա հոգևորականների և իմաստունների հրապարակային բա-նավեճի մեջ են մտել Հովհաննես վարդապետի հետ: Ինչպես վկայում է Խաչատուր աբեղա Ջուղայեցի պատմիչը, այս բանավեճերի ընթացքում Հովհաննես վարդապետն անհողդողդ է եղել և հիմնականում կարողացել է հաղթանակած դուրս գալ: **Խաչատուր աբեղա Իսահակյան Ջուղայեցին** իրանահայ հոգևոր-մշակութային աչքի ընկնող գործիչներից մեկն է, որի հեղինակած «Պատմություն պարսից» մատյանը աղբյուրագիտական բացառիկ արժեք ունի թե՛ Իրանի և թե՛ XVII-XVIIIդդ. իրանահայության պատմության ուսումնասիրության համատեքստում: Խաչատուր Ջուղայեցին կազմել է Կյուրոս Ավագից սկսած (Ք.ա. 559թ.) մինչև Քերիմ խան Զենդի մահը 1779թ. պարսից տիրակալների ժամանակագրությունը՝ տալով դրանց կառավարման թվականները: XVIII դ. իրանահայ հոգևոր և մշակութային ականավոր գործիչներից է Ստեփաննոս Երեց Հազարջրիբեցին (Տերտերյան), որի հեղինակած «Պատմագիրք» կամ «Հանգիտագիրք» մատյանը անգնահատելի սկզբնաղբյուր է հանդիսանում Իրանի հայկական գաղթօջախների (հատկապես Փերիայի և Բուրվարի) և իրանահայ հոգևոր թեմերի XVII-XVIII դդ. Պատմության ուսումնասիրության համար: Ստեփաննոս Երեցը բազմակողմանի օժտված, ստեղծագործական խառնվածքի տեր և Հայ առաքելական եկեղեցու դավանանքին անմնացորդ նվիրված լուսավորյալ քահանա էր: Ստեփաննոս Երեցի «Պատմագիրքը» հայ ավանդական պատմողական բնույթի պատմա-

գրության վերջին մատյաններից է և ժամանակագրական առումով փաստորեն շարունակությունն է հանդիսանում Առաքել Դավրիժեցու «Պատմության» և Խաչատուր Ջուղայեցու «Պատմություն պարսից» երկերի: Ստեփաննոս Երեցը հայ դասական պատմողական պատմագրության վերջին ներկայացուցիչն էր, ումից հետո սկսվում է հայոց գիտական պատմագրության շրջանը:

Չորրորդ ենթագլուխը վերնագրված է «**Իրանի հայ կաթողիկե և ավետարանական համայնքները**»: Մինչև 1954թ. Իրանի Հայ կաթողիկե համայնքի առաջնորդանիստը գտնվում էր Սպահանում, որի հոգևոր հովվության սահմաններում էին Թեհրան, Սպահան և Թավրիզ քաղաքները: Հռոմի Պիոս XII պապի կողմից Իրանի կաթողիկե թեմի առաջնորդ է նշանակվում դեռևս 1934թ. այստեղ հովվություն իրականացրած Մկրտիչ Աբգարյանին, ում ջանքերով կառուցվում և ձեռամբ Գրիգոր-Պետրոս XV կաթողիկոս-պատրիարք Աղաջանյանի օծվում է Հայ կաթողիկե Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցին: 1962թ. կաթողիկե համայնքի ջանքերով հիմնվում է «Ալիշան» դպրոց, որը 1981թ. կաթողիկե հովվապետ Էմմանուել Փոլադյանի կողմից հանձնվել է Հայ Առաքելական եկեղեցու Թեհրանի թեմական խորհրդին: Հայ կաթողիկե եկեղեցիներ կան նաև Սպահանում Ս. Վարդարանը և Մազանդարան նահանգի «Հայկաշեն» ճամբարի տարածքում՝ Ս. Անտոնը: Ժամանակակից Իրանում հայ կաթողիկե ոչ ստվար համայնքներ կան Թեհրանում, Շիրազում և Սպահանում, որոնց թիվը չի գերազանցում 2200-ը: Իրանում Հայ ավետարանական եկեղեցու առաջին համայնքները հաստատվել են Թավրիզում դեռևս XIX դ. կեսերից և վայելում էին ամերիկյան բողոքական միսիոներների հովանավորությունը: Իրանահայության շրջանում բողոքական քարոզիչների մեծ մասը ներկայացնում էին Ս. Գրոց ընկերության անդամները, որոնք հիմնականում գալիս էին Արևմտյան Հայաստանից: Արդեն հաջորդ դարում բողոքական բոլոր համայնքների կենտրոնը դառնում է Թեհրանը, որտեղ էլ Ֆիշերաբադի և Ղավամ-էս-Սալթանե փողոցներում գործող անջատ Հայ ավետարանական եկեղեցիները միավորվելով 1970թ. Կազմեցին Ս. Հովհաննես եկեղեցին: Ավետարանական եկեղեցու հոտը կազմող հավատացյալ հայերի թիվը միշտ նվազ է եղել՝ 1990-ականներին 1900, իսկ ներկա ժամանակներում նրանց կենտրոն համարվող Թեհրանում, ըստ Վ. Բայբուրդյանի տվյալների, չի գերազանցում 200-ը: Իրանում չնչին թիվ են կազմում հայ ուղափառները և ունիթորականները: Ուղղափառների մի փոքր համայնք ապրում է Ատրպատականում: Ոչ մեծ թվով հոգեգալստականներ ապրում են Թեհրանում և Թավրիզում: Այս համայնքները Իրանի իսլամական հեղափոխությունից հետո զրկվեցին ամերիկյան դավանակիցների ֆինանսավորումից և նրանց մի մասը արտագաղթեց Իրանից:

Եզրակացություններում ընդհանրացվել են հետազոտության հիմնական արդյունքները և ձեռքբերումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայերի առաջին զանգվածային բռնի տեղափոխումը Իրանի տարածք կապվում է 369թ. իրադարձությունների հետ և ամենայն հավանականությամբ Միջագետքում և Խուզիստանում ինչ-որ ժամանակ եղել են հայերով բնակեցված բնակավայրեր, որոնց բնակչությունը ժամանակի ընթացում ձուլվել է տեղաբնիկների մեջ:
- XIդ. Սելջուկ-թյուրքերի իրականացրած հայերի երկրորդ զանգվածային բռնագաղթից հետո Իրանում բազմապատկվեց հայ բնակչության թիվը հատկապես քաղաքային բնակավայրերում:
- XIII-XIVդդ. Միջազգային առևտրական ճանապարհների վրա մոնղոլների հիմնած խոշոր վաճառաշահ քաղաքների (Սուլեյմանիե, Ռեյ և այլն) բնակչության զգալի մասը կազմում էին հայ առևտրականներն ու արհեստավորները: Պատմական Արտազ գավառում հայ մոնղոլական դաշնագրի կնքումից հետո հաստատվեց հայկական ժառանգական իշխանություն, որը գոյատևեց մինչև 1426թ.: Արտազի իշխանության տարածքում հիմնվեց Ծործորի նշանավոր դպրոցը:
- XVI-XVII դդ. Ատրպատականի հայաշատ բնակավայրը հայտնվեցին թուրք-պարսկական երկարատև պատերազմների թատերաբեմում:
- 1604թ. Իրանի Շահ Աբբաս Ա արքան շուրջ կես միլիոն հայ տեղահանեց բնիկ գավառներից և տեղափոխեց Իրան: Երկրի մայրաքաղաք Սպահանի հարևանությամբ հիմնվեց Նոր Ջուղա քաղաքը, որը կարճ ժամանակ անց դարձավ համահայկական նշանակության տնտեսական, քաղաքական, հոգևոր և մշակութային կենտրոն: Սեֆյան արքայատոհմի անկումից հետո անիշխանության և գահակալական կռիվները ծանր հարված հասցրեցին Նոր Ջուղայի տնտեսական ներուժի և շատ ջուղայեցիներ հեռացան երկրից՝ հաստատվեցին Հնդկաստանում և Ծայրագույն Արևելքի երկրներում, հիմնելով դրանցում հայկական նոր օջախներ:
- Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այժմյան Իրանի տարածքում ստեղծված իրանահայ հոգևոր թեմերից հնագույնը Ս. Թադեի վանքն է, որն ըստ ավանդության կառուցվել է Յիսուսի աշակերտ Թադեոս առաքյալի նահատակության վայրում: Վանքը որոշակի ընդհատումներով մինչև 1833թ. ուներ թեմի կարգավիճակ,

եպիսկոպոսանիստ էր և հանդիսանում էր Ատրպատականի հոգևոր-վարչական կենտրոն:

- Աղբյուրագիտական քննության և համեմատական նյութերի համադրման արդյունքում վեր են հանվել Հայոց նոր վկաների կամ մոռացված սրբերի անուններ, որոնց երկրային կյանքն ու նահատակությունը ուղղակիորեն կապված էին Իրանի հոգևոր թեմերի հետ:
- Նոր Ջուղայի հիմնադրմանը զուգընթաց ստեղծվեց նոր հոգևոր թեմ, որը հետագայում կոչվում էր նաև Նոր Ջուղայի կամ Իրանահնդկական թեմ:
- Իրանի հոգևոր թեմերին վերաբերվող Սիմեոն Երևանցի և Ղուկաս Կարնեցի կաթողիկոսների դիվանում պահվող փաստաթղթերից դուրս բերված արժեքավոր տեղեկությունները դիտարկվել են պատմական միջավայրի համատեքստում, որի արդյունքում բացահայտվել են նոր իրողություններ:
- Արձանագրվել է, որ Ատրպատականի և Իրանահնդկական թեմերի գործունյա և նվիրված առաջնորդների համառ և համակարգված ջանքերի շնորհիվ հնարավոր է իրանական իշխանություններից ակնկալել և ստանալ իրավական ու կրոնական ազատությունների իրանահայության համար:
- Ատրպատականի թեմի երկարամյա առաջնորդ Ներսես արք. Մելիք-Թանգյանի ազգանպաստ և հայրենավեր գործունեության վերլուծության միջոցով վեր են հանվել այն հիմնախնդիրները, որոնք ծառացել էին ոչ միայն տվյալ թեմի, այլև ողջ հայության համար դժնդակ Առաջին աշխարհամարտի տարիներին:
- Համադրելով տարբեր աղբյուրներում սփռված տվյալները Իրանահայ թեմական առաջնորդների վերաբերյալ, պարզվել է, որ դրանցում կան տարընթերցումներ, անունների և տարեթվերի անհամապատասխանություն և փորձ է արվել շտկել դրանք:
- XXդ. սկզբին ընդունված և վավերացված Ատրպատականի և Իրանահնդկական թեմերի կանոնակարգերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դրանք իրենց ժամանակի համար բավականին առաջադեմ իրավական ակտեր են, սակայն հետագա տարիներին, կապված նրա հետ, թե երկրում ինչ կարգեր են տիրում, այդ փաստաթղթերը մեծ մասամբ կամ հնացած էին, կամ էլ կարիք ունեին շտկումների, լրացումների և վերաձևակերպումների:
- Նորաստեղծ Թեհրանի թեմի պարագան ուսումնասիրելու ընթացքում պարզվել է, որ տեղական ինչ-ինչ քաղաքական ուժեր և խմբակ-

ներ փորձել են առանց Մայր Աթոռի հետ համաձայնեցնելու, ինքնիրավ ստեղծել թեմ և թեմական խորհուրդ, որը շատ արագ կանխվել է Ս. Էջմիածնի կողմից:

- Պատմական փաստերի և տեղեկությունների վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ Իրանահայ թեմերը ստանալով իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք են բերում որոշակի ազատություններ սեփական միջոցները տնօրինելու հարցում:
- Հրապարակի վրա եղած նյութերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 1958-1960թթ. Իրանահայ երեք թեմերի անջատումը Ս. Էջմիածնից իր մեջ հոգևոր որևէ բաղադրիչ չէր պարունակում և իր հիմքում միայն քաղաքական ենթատեքստ ուներ, որը փորձ էր արվում քողարկել հոգևոր-կրոնական շղարշով: Հակաէջմիածնական շարժումը և այսպես կոչված թեմագողությունը դարձել էր Սփյուռքում գործող որոշ ուժերի իդեա ֆիքսը, որը ինչպես ցույց տվեցին հետագա տարիների իրադարձությունները միայն վնաս էր հասցնում սփյուռքահայությանը:
- Ուսումնասիրելով տարբեր սկզբնաղբյուրներ և համադրելով հատկապես հայերեն ձեռագրերի հիշատակարանները, պարզվեց, որ Իրանահայ թեմերի տարածքում գտնվող շատ վանքեր ու մենաստաններ, նույնիսկ նոր հիմնված այնպիսի քաղաքում, ինչպիսին Սուլթանիեն էր, դարձել էին փայլուն գրչության կենտրոններ: Սրանցից շատերը կարճ պատմություն ունեցան:
- Գրչության ուրույն կենտրոն էր նաև Նոր Ջուղան, որտեղ զուգահեռաբար գործում էր ինքնաշեն և ինքնագյուտ տպարան, առաջինը ոչ միայն Իրանում, այլև Միջին Արևելքում:
- Ներկայացնելով Իրանահայ թեմերի եկեղեցիներն ու հատկապես վանքերն ու վանական համալիրները, որոշ շտկումներ են արվել՝ կապված դրանց կառուցման ժամանակի, կառուցողի անձի և այլ իրողությունների հետ:
- Կարևորվել է ժողովրդական ուխտատեղիների գտնվելու վայրերը պարզելը, որոնց շարքում բացի հանրահայտ Ս. Թադեի կամ Ս. Ստեփանոս Նախավկայի վանքերի, հատկապես աչքի են ընկնում Նոր Ջուղայի եկեղեցի-մատուռ ուղտատեղիները:
- Հատուկ մոտեցում է ցուցաբերվել Իրանահայ հոգևոր-մշակութային ականավոր գործիչներին ներկայացնելու պարագայում: Այն գործիչները, որոնց անձը, գործը և վաստակը բազմաթիվ անգամ ուսումնասիրված են, կարիքը չունեին մեկ անգամ ևս ներկայացվելու:

Փորձ է արվել ներկայացնել նրանց, ովքեր հսկայական ավանդ ունենալով հանդերձ Իրանահայության հոգևոր-մշակութային կյանքում համեմատաբար քիչ են ներկայացված:

- Համառոտ անդրադարձ է կատարվել Իրանում ապրող հայ կաթողիկե և բողոքական համայնքներին, որոնք հստակ արտահայտված հայկական ինքնագիտակցություն ունեն և բավականին համերաշխ են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների հետ:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատանքները

1. Անդրիկյան Ա., Իրանահայ հոգևոր թեմերը XVIIIդ. 60-70-ականն թթ. (ըստ Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի «Հիշատակարանի» նյութերի), ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 2 (47), Երևան, 2020, էջ 168-177:
2. Անդրիկյան Ա.,Ղուկաս Ա կաթողիկոսի հարաբերությունները Իրանահայ թեմերի հետ, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, թիվ 3 (8), «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի հրատ., Երևան, 2020, էջ 56-64:
3. Անդրիկյան Ա., Իրանահայ հոգևոր թեմերի «մոռացված սրբերը» (Ավագ Սալմաստեցի, Իսահակ Թավրիզեցի, Միրաք Թավրիզեցի, Գրիգոր Արփայեցի), Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, հ. Դ, ԵՊՀ հրատ., Երևան, 2020, էջ 141-154:
4. Անդրիկյան Ա., Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր թեմերը և պարսկահայության իրավա-քաղաքական վիճակը XIXդ. երկրորդ կեսին, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, «Լինգվա» հրատարակչություն «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ, № 1 (54), Երևան, 2020, էջ 244-253:
5. Անդրիկյան Ա., Իրանահայ հոգևոր թեմերի գրչության կենտրոնները, XIV-XV դարերում, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդես, № 1, Երևան, 2021, էջ 162-173:
6. Անդրիկյան Ա.,Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հասարակական և կրթա-մշակութային գործունեությունը Ատրպատականի թեմում, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, №1(12) «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի հրատ., Երևան, 2021, էջ 11-20:

АНДРИКЯН АРМАН ГЕВОРГОВИЧ
ИРАНСКИЕ ЕПАРХИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ (ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ)

Резюме

Диссертация посвящена истории иранских епархий Армянской Апостольской церкви, которые образовались вместе с ирано-армянскими колониями и сыграли значительную роль в истории Армянской церкви. Целью всестороннего и систематического изучения истории армянских епархий Ирана является восполнение пробела в историографии Армянской церкви.

Диссертация состоит из введения, трех глав, заключений и списка использованных первоисточников и литературы.

В введении обоснована актуальность темы, цель и задачи исследования, методологические основы исследования, новизна результатов, представлен анализ первоисточников и литературы по теме.

Первая глава диссертации: **"Армянская епархия Армянской Апостольской Церкви в Иране в Средние века и в новые времена (исторический очерк)"** состоит из следующих пяти разделов: Формирование армянских колоний на территории Ирана (V-XVIII вв.); Формирование и развитие иранских епархий Армянской Апостольской церкви (XIV-XVII вв.); Новые армянские мученики или "забытые святые" армянских духовных епархий Ирана; духовные епархии новой Джульфы (Нор-Джуга) и Атрпатакана в XVIII в. отношения с Первопрестольным св. Эчмиадзином. Усилия армянских католикосов в деле улучшения религиозно-правового положения армян Ирана, Архиерееи армянских епархий Ирана в XVII-XVIII вв. (краткие характеристики).

Вторая глава диссертации. **«Иранско-армянские епархии в XIX-XX веках»** состоит из семи разделов, в которых были подняты следующие вопросы: Иранско-армянские епархии. Улучшение положения персидских армян в XIX веке. Улучшение положения иранских армян во время правления Насреддин и Мозаффаеддин шахов; Борьба архиеерев Атрпатаканской епархии за правовую, политико-религиозную свободу находящихся под их опекой армян (епископ Георг Веапетян и другие); Борьба архиеерев епархии Новой Джульфы за правовую, политико-религиозную свободу находящихся под их опекой армян (епископ Тадеос Бекназарян и другие); Проблемы армянских беженцев, спасшихся от геноцида и патриотическая деятельность архиереея епархии Атрпатакана архиепископа Нерсеса Мелик-Тангяна; Архиерееи армянских епархий Ирана в XVII-XVIII вв. (краткие характеристики); Уставная

система управления армянскими духовными епархиями Ирана и взаимоотношения с государством в. XX в.; Незаконное отчуждение ирано-армянских епархий от Первопрестольного Святого Эчмиадзина.

Третья глава диссертации. **«Научно-образовательная и культурная деятельность епархий Армянской Апостольской церкви в Иране»** состоит из четырех разделов, в которых представлены следующие вопросы: Центры письменности армянских духовных епархий Ирана (монастырь Св. апостола Фаддея, монастыри и церкви в городх Хой, Маку, Тебриз, Султание, Новая Джуга и другие); Известные монастыри, церкви, епархиальные сооружения, принадлежащие епархиям Армянской Апостольской церкви в Иране (краткий обзор с древних времен до XX века); Выдающиеся религиозно-культурные деятели армянских епархий Ирана; Армяно-католические и Армяно-евангелические общины Ирана.

В заключениях обобщены основные результаты и достижения исследования.

ANDRIKYAN ARMAN

THE DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF IRAN (HISTORY AND RELEVANCE)

Abstract

This dissertation is dedicated to the history of the Iranian dioceses of the Armenian Apostolic Church that emerged in parallel with the foundation of the Armenian colonies and which played a major role in the history of the Armenian church at large. The aim of this comprehensive and systematic study of the history of the Armenian dioceses of Iran is to fill the gap that exists in the historiography of the history of the Armenian Church.

The dissertation is made up of an introduction, three chapters, a conclusion, and a bibliography.

In the Introduction, the topicality of the research, its purpose and objectives, the methodological bases of the study, as well as the novelty of the findings are justified. It also presents the theories covered in the literature and key sources used for this study.

The first chapter of the dissertation titled **"The "Iranian Dioceses of the Armenian Apostolic Church in the Middle Ages and in the Modern Age (A Historical Overview)"** consists of the following five sub-chapters: 1. The Emergence of Armenian Colonies on the Territory of Iran (5th -18th centuries), 2. The Emergence and Flourishing of the Armenian Apostolic Church in Iran, 3. The New Armenian Witnesses of the 4th-17th centuries or the "Forgotten Saints" of the Iranian Dioceses, 4. The Dioceses of New Julfa and Atropatene in the 18th century,

Their Relations with Holy Etchmiadzin, The Efforts of the Armenian Patriarchs in Improving the Legal and Religious Position of Persian-Armenians, 5. The Spiritual Leaders of the Iranian Dioceses in the 17th-18th centuries (A Concise Overview).
The second chapter of the dissertation, **"The Iranian Dioceses in 19th-20th Centuries"**, is made up of seven sub-chapters that explore the following issues: The Armenian dioceses of Iran in the 19th century, the improvement of the status of Persian-Armenians during the reign of Shah Naser al-Din and Shah Mozaffar ad-Din; the fight of the diocesan leaders of Atropatene for the legal, political, and religious freedoms of the Armenians under their spiritual leadership (Bishop Georg Vehapetyan and others); the struggle of the diocesan leaders of New Julfa for the legal, political, and religious freedoms of the Armenians under their spiritual leadership (Bishop Thaddeus Beknazaryan and others); the hardships of the Armenian refugees that had survived the Armenian Genocide and the patriotic endeavors of Archbishop Nerses Melik-Tankyan, the diocesan leader of Atropatene; the leaders of the Armenian dioceses of Iran in the 19th-20th centuries (A Concise Overview); the statutory system of governance of the Armenian Dioceses of Iran and their interrelations with the state in the 20th century; the expulsion of the Iranian dioceses from the Mother See of Holy Etchmiadzin.

The third chapter titled **"The Scientific-Educational and Cultural Activity of the Dioceses of the Armenian Apostolic Church in Iran"** comprises four sub-chapters that discuss the following issues: the literacy centers of the dioceses of the Armenian Apostolic Church in Iran (Monastery of Saint Thaddeus, Khoy, Maku, Tabriz, Soltaniyeh, New Julfa and others), the famous monasteries, monastic complexes, churches, vicarial structures, and other assets belonging to the Iranian dioceses, a brief historical overview of the period from the ancient times to the end of the 20th century; the prominent Persian-Armenian spiritual and cultural figures; the Armenian Catholic and Evangelical communities of Iran.
The conclusion sums up the main findings of the research.